ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Հայկական հարցը փարիզի խաղաղության վեհաժողովում

Հետազոտող ուսուցիչներ՝ Թերեզա Գևորգյան

Հասմիկ Գալստյան

Կոտայքի մարզ «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

Հայերի սպասելիքները վեհաժողովից.....4

Միասնական մանդատ սահմանելու խնդիրը.....13

ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՐՑԸ.....16

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ.....17

Եզրակացություն.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1919 թվականի հունվարի 18-ին Փարիզից ոչ հեռու գտնվող Վերսալյան պալատի Հայելազարդ դահլիճում իր աշխատանքներն սկսեց Առաջին աշխարհամարտն ամփոփող վեհաժողովը:Այդ մեծ ժողովի ո՛չ օրը,և ո՛չ էլ տեղը պատահական չէին ընտրված:Այստեղ,Լյուդովիկոս 14-ի շքեղ պալատում էր հռչակվել Առաջին աշխարհամարտը սանձազերծած Գերմանական կայսրության կազմավորումը: Փարիզի խորհրդաժողովը դրեց նոր՝ Վերսալ-Վաշինգտոնյան աշխարհակարգի հիմքը,որը դարձավ թվով երրորդը՝ Վեստֆալյան և Վիեննայի աշխարհակարգերից հետո: Այն դարձավ միջպատերազմյան ժամանականակաշրջանի և ամենակարճը գոյատևած աշխարհակարգ: Փարիզում սահմանվեցին հետպատերազմյան կարգավորման հիմնական սկզբունքները և լծակները:Այդ վեհաժողովի շատ որոշումների հիմքում ընկած էին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերը»:

Բեռլինի 1878թվականի վեհաժողովից հետո հայերը ,թերևս,ոչ մի միջազգային վեհաժողովից այդքան ակնկալիքներ չեն ունեցել,որքան Փարիզի խաղաղության խորհրդաժողովից: Դրա ամենավառ վկայությունն է հայկական երկու պատվիրակությունների մասնակցությունը խորհրդաժողովի աշխատանքներին: Առաջին աշխարհամարտի ակտիվորեն մասնակցած հայերը՝200հազար զինվոր դաշնակիցների բանակում և 10հազար կամավորականներ, ովքեր կրել էին ահռելի մարդկային և նյութական վնասներ,ակնկալում էին,որ կվերականգնվի անկախ և միացյալ հայկական պետություն,կփոխհատուցվեն հայերի կրած ահռելի վնասները:

1918թ. Մայիսյան հերոսամարտերի արդյունքում հռչակված Հայաստանի հանրապետությունը փաստացի դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից կողմ, դե ֆակտո ճանաչվեց Անտանտի դաշնակիցների կողմից և մասնակցեց խորհրդաժողովին :Փարիզի խաղաղության վեհաժողովում ղեկավարում էր Տասի խորհուրդը,որի մեջ մտնում էին Մեծ Բրիտանիայի,Ֆրանսիայի,Ամն-ի,Իտալիայի և Ճապոնիայի երկուական ներկայացուցիչ:Խորհրդային Ռուսաստանը վեհաժողովին չէր հրավիրվել:Պարտված երկրները Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցում էին միայն այն ժամանակ,երբ նրանց հետ պետք է կնքվեր պայմանագիր:Դաշնակիցներին շատ խիստ մտահոգում էր Սևծովյան նեղուցների՝

Բոսֆորի և Դարդանելի խնդիրը: 1916թվականի մայիսի 16-ին կնքված համաձայնագրով նեղուցները պետք է անցնեին Ռուսաստանին, սակայն Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1917 թվականի նոյեմբերի 8-ի խաղաղության մասին հրովարտակով/դեկրետով/ չեղյալ էր հայտարարել ցարական և ժամանակավոր կառավարությունների բոլոր գաղտնի պայմանագրերը,այդ թվում և Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Եթե ժամանակին որոշվել էր նեղուցները տալ Ռուսաստանին՝Անգլիայի և Ֆրանսիայի շահերի պաշտպանության երաշխիքով,ապա Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո մեծ տերությունները դեմ էին այդ որոշմանը:1918թվականի հունվարի 5-ին Լլոյդ Ջորջը հանդես եկավ հայտարարությամբ,որ Միջերկրական և Սև ծովերը կապող նեղուցները պետք է միջազգայնացվեն:

Դաշնակիցների մտահոգող սևծովյան նեղուցների խնդիրը սերտորեն առնչվում էր Արևմտյան Հայաստանի հարցին և այդ կապակցությամբ խորհրդաժողովում ծագեց սևծովյան նեղուցների ր Արևմտյան Հայաստանի միացյալ մանդատ /հովանավորու թյուն/ սահմանելու հարցը:Լլոյդ Ջորջի կողմից առաջ քաշված այդ առաջարկը պաշտպանեց ԱՄՆ նախագահ Վ.Վիլսոնը:

Հայ իրականության մեջ թեման ամենաքննարկվածներից ու ամենաքննարկվողներից մեկն է,որովհետև Փարիզի խորհրդաժողովը,Սևրի պայմանագիրը և Վիլսոնի իրավարար վճիռը մնացել է հայ ժողովրդի ամենամեծ ակնկալիքը դաշնակիցներից և ամենամեծ հիասթափությունը:

Դպրոցում ուսունասիրելու համար թեման շատ մեծ հնարավորություններ է տալիս սովորողի քննադատական մտածողությունը,իրադարձությունները սթափ գնահատելու հմտություններ զարգացնելու համար:

ՀԱՅԵՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՑ

Հայերը որոշակի սպասելիքներ ունեին և նախապատրաստվում էին վեհաժողովին: Դեռ պատերազմի ժամանակ Եվրոպայում էր արևմտահայերից բաղկացած Ազգային պատվիրակությունը եգիպտահայ Պ. Նուբար փաշայի գլխավորությամբ: Նա 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դիմեց դաշնակից պետություններին, որպեսզի նրանք Հայաստանը պաշտոնապես ճանաչեն պատերազմող կողմ և հրավիրեն հաշտության վեհաժաղովին, սակայն մերժում ստացավ, քանի որ ՀՀ-ն դեռ չէր ճանաչվել որպես պետություն և չէր հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ[1]:

1918 թ. հունարի 18-ին Փարիզում բացվեց հաշտության վեհաժողովը, որին մասնակցում էին 27 երկրների 2000 պատվիրակներ: Վեհաժողովում հիմնական դերակատարը «Մեծ եռյակն» էր (Վ. Վիլսոն, Դ. Լլոյդ Ջորջ, Ժ. Կլեմանսո)[2]: Հայաստանի և ոչ մի ներկայացուցիչ Փարիզի կոնֆերանսին պաշտոնապես չմասնակցեց: Հրավիրված չէր նաև Խորհրդային Ռուսաստանը:

Կոնֆերանսում հաստատվեց Ազգերի լիգայի կանոնադրությունը, ընդունվեց մանդատային համակարգը: Մանդատները պետք է տար Ազգերի լիգան, այն երկրներին, որոնք չեին կարողանում տվյալ ծանր ժամանակաշրջանում ինքնուրույն կառավարվել և այս կամ այն զարգացած պետության հովանավորության կարիքն ունեին: Ենթամանդատային երկրները բաժանվեցին երեք կատեգորիաների, և Արևմտյան Հայաստանը մտավ առաջինի մեջ՝ որպես Թուրքիայի նախկին տիրապետության տակ եղած նախկին մարզ[3]:

Փարիզի կոնֆերանսին մասնակցելու համար 1918 թ. դեկտեմբերի 5-ին կազմվեց ՀՀ պատվիրակությունը, որի ղեկավարն էր Ա. Ահարոնյանը, անդամներն էին, Հ. Օհանջանյան, Մ. Պապաջանյան: Փետրվարի 4-ն պատվիրակությունը հասավ Փարիզ[4]:

---

[1] Տե՛ս **Ամիրեան Լ.**, Եգիպտահայ տարեցոյց 1925,Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

[2] **Никольсон Г.** Как делался мир в 1919 г. М.: Госполитиздат, 1945, с. 57; **Тардье,** Мир, М.: Госполитиздат 1943, с. 85

[3] **Կարապետյան Մ.,** Հայաստանը 1912-1920 թվականներին, Ե., «Զանգակ-97», 2003, էջ 302:

[4] **Գալոյան Գ.,** Հայստանը և մեծ տերությունները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» 1999, էջ, 89:

Հայկական երկու պատվիրակությունները գործում էին բավականաչափ անմիաբան: Եթե ազգային պատվիրակությունը Պ. Նուբարի գլխավորությամբ ներկայացնում էր արևմտահայությանը և հավակնում էր Միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը, որի բաղկացուցիչ մասը պետք է լիներ «Արարատյան հանրապետությունը» (ՀՀ-ը), ապա ՀՀ-ի պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ պահանջում էր հաշվի նստել ստեղծված փաստի հետ և հայոց ընդարձակ պետության ստեղծման համար հետակետ դարձնել արդեն գոյություն ունեցող Հայաստանի հանրապետությունը[5]:

Ի վերջո Ա. Ահարոնյանի պատվիրակությունը ընդունեց Պ. Նուբարի մշակած պահանջները և 1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունների նախագահները Փարիզի վեհաժողով ներկայացրին «Հայկական պահանջների հուշագիրը»:

Ըստ հուշագրի Հայաստանն ընդգրկելու էր հետևյալ տարածքները.

1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Սվազի և Տրապլիզոնի վիլայեթները:

2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշը, Սիսը, Ջեբել-Բեշիքերթը և Ադանան՝ Ալեքսանդրետ նավահանգստով:

3. Կովկասի Հայկական Հանրապետության տարածքը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հյուսիս ընկած շրջանի[6]: Դա կազմում էր մոտ 300 հազ. քառ կմ տարածք[7]: Դաշնակից տերություններից մեկը կամ Ազգերի լիգան պետք է երաշխավորեր ստեղծվող հայկական պետության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը: Դաշնակից տերություններից մեկին լիազորություններ պետք է տրվեին՝ 20 տարով ստանձնելու Հայաստանի մանդատը: Հայաստանը պետք է փոխհատուցում ստանար կրած կորուստների համար, պատերազմի տարիներին բռնի տեղահանված հայերը պետք է հնարավորություն

---

[5] Նույն տեղում, էջ 89-90:

[6] Տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» Ե., 2002, N6, էջ 105-118 և 2002, N5, էջ 154-167, նաև՝ **Քաջազնունի Հ.,** Հ. Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 62-64:

[7] **Արզումանյան Մ.,** Արհավիրքից վերածնունդ , Ե., 1973, էջ 227:

ստանային վերադառնալ իրենց հայրենիքը: Հայերի զանգվածային ոչնչացման մեղավորները պետք է պատժվեին[8]:

Հայկական պահանջները խիստ ընդդիմության հանդիպեցին Ֆրանսիայի կողմից, որը ձգտում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Կիլիկիան պահանջելու հարցում հայերին խրախուսում էր Միացյալ Նահանգները, որը Հայաստանի մանդատի հիմնական հավակնորդն էր: Սակայն ԱՄՆ-ը խոստումներից այն կողմ չանցավ: Իսկ այս փաստաթուղթը պատշաճ արձագանք չգտավ: 1919 թ. հոկտեմբերին, երբ Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը այցելեց Լոնդոն Անգլիայի արտգործնախարար լորդ Ջ. Քերզոնը որոշակիորեն ասաց, որ անհնար է ստեղծել Հայաստան՝ համաձայն 1919 թ. փետրվարի 12-ի հուշագրի: Դրա փոխարեն դաշնակիցները նախատեսնում էին ստեղծել Հայաստան՝ Կովկասյան Հայաստանին ավելացնելով Թուրքահայաստանի մի մասը՝ ելքով դեպի Սև ծով, իսկ Կիլիկիան տրվում էր Ֆրանսիային[9]:

Պարտված Գերմանիայի հարցերով զբաղված դաշնակից տերությունները չէին շտապում քննարկել թուրքական հարցը, որի հետ սերտորեն առնչվում էին Հայկական հարցն ու հայկական միասնական պետության ստեղծումը: 1919 թ. հունիսի 28-ին Վերսալում Գերմանիայի հետ ստորագրվեց հաշտության պայմանագիր: Փարիզի խորհրդաժողովի աշխատանքների մի մասը ավարտվց: Եվ այնուամենայնիվ, 1920թ. հունվարի 19-ին կոնֆերանսը դե ֆակտո ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հետագայում հայկական հարցը քննարկվեց Սան Ռեմոյի կոնֆերանսում և իր արտահայտությունը գտավ Սևրի հաշտության պայմանագրում:

* * *

1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 22-ը Փարիզում տեղի ունեցավ ազգային համագումար, որին մասնակցում էին հայկական գաղթօջախների 38 ներկայացուցիչներ: Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարը հաստատեց կոնֆերանսին ներկայացված հուշագիրը և ավելացրեց վնասների հատուցման չափը: Ըստ Հայ

[8] Նույն տեղում:
[9] **Կարապետյան Մ.,** նշվ. աշխ., էջ 307:

ազգային համագումարի տվյալների այն կազմում էր 19 մլրդ 130 մլն 982 հազար ֆրանկ: Այդ գումարի 14 մլրդ 598 մլն 510 հազարը տրամադրվելու էր արևմտահայությանը, 4 մլրդ 532 մլն 472 հազարը՝ արևելահայությանը[10]:

Փաստաթուղթը հանդիսանում է Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը, որը կազմվել է Հայ ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից և որպես հուշագիր 1919 թ. փետրվարին ներկայացվել Անտանտի տերությունների ուշադրությանը՝ Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովին:

1919 թ. փետրվարին Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացվեց երկու հուշագիր, մեկում հայ ժողովուրդը առաջ էր քաշում իր քաղաքական (տարածքային) պահանջները, մյուսը նվիրված էր Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար դրամական փոխհատուցման խնդրին (ռեպարացիաներ):

Դրամական փոխհատուցմանը վերաբերող հուշագիրը կրում է «Tableau approximatif des réparations et indemnités pour les dommages subis par la nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase» վերնագիրը:

Հաշվեկշիռը կազմված է յուրաքանչյուր հայ ընտանիքին հասցված վնասի հաշվարկով, միջպատերազմյան կամ հին գների միջին արժեքի և 1919թ. գործող գների միջին արժեքի չափով, ֆրանսիական դրամանիշի՝ ֆրանկի արտահայտությամբ:

Հաշվեկշիռը բաղկացած է երկու մասից և հիմնականում նպատակ էր հետապնդում հատկացումների և հատուցումների պայմանով վերականգնել հայ ժողովրդի կրած նյութական վնասները:

Փաստաթուղթը բաղկացած է երկու մասից. առաջին մասում ներկայացված է արևմտահայերի կոտորածների և տեղահանության արդյունքում մարդկային և նյութական կորստի և դրա փոխհատուցման չափի հաշվարկ, իսկ երկրորդ մասը նվիրված է 1918 թ. թուրքական առաջխաղացման և օկուպացիայի արդյունքում Արևելյան Հայաստանի տարածքում բնակվող հայերի կորուստներին:

---

[10] **Վրացյան. Ս.,** նշվ., աշխ., էջ 286:

Փարիզի վեհաժողովին ներկայացված հաշվեկշռի ներածական բաժնում առաջին անգամ փորձ է կատարվում պաշտոնապես տեղեկացնել պատերազմի մասնակից պետություններին, թե պատերազմի չորս տարիներին ինչպիսի փոփոխություն է կրել Օսմանյան Թուրքիայի տարածքում բնակվող հայ ազգաբնակչության թվակազմը: Ըստ այդ տեղեկատվության, 1914թ. Օսմանյան կայսրությունում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2,026,000 մարդ: Այդ ընդհանուր թվից առանձնացվում է Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից և մի քանի այլ շրջաններից չտեղահանված 226,000 հայերի թիվը, իսկ մնացյալ 1,800,000 հայերը ոչնչացան, տեղահանվեցին ու ապաստան գտան Եվրոպայում և Կովկասում՝ լքելով իրենց տներն ու գույքը:

Վիճակագրական հաշվարկների սկզբունքների կիրառմամբ այդ 1,800,000 հայերը կազմում էին 360,000 ընտանիք (1 ընտանիք՝ 5 շունչ), որոնց մեկ քառորդը 90,000 ընտանիքներ բնակվում էին քաղաքներում, իսկ մնացած 270,000 ընտանիքները՝ գավառներում[11]:

Ստորև ներկայացվում է հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշռի գլխավոր հաշվարկների աղյուսակը[12].

Ա. Գավառների բնակչության կրած վնասները (մեկ ընտանիքի հաշվարկով)	**1914թ. գինը**	**1919թ. Գինը**
1. Կալվածքներ (տներ, ագարակներ, մթերանոցներ, ջրաղացներ, անտառներ, այգիներ, թթենի տնկարաններ)	475	2850
2. Կահ–կարասի (կարասի, հագուստեղեն և գոհարեղեն, գույք)	600	3000
3. Երկրագործական գործիքներ (արոր, սայլ և կառք)	300	1500
4. Մեկամյա հունձքերի կորուստ (հաշվարկը կատարվել է Թուրքիայի երեսփոխանական ժողովի	-	338

[11] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, (քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ **Զաքարյան Ա.**, Ե., ՀՀ ԳԱԱ, 2005, հավելված, էջ 222-223

[12] Նույն տեղում, էջ 223-225:

1911թ. տարեկան պաշտոնական հաղորդագրությունում տեղ գտած վիճակագրության համաձայն, ըստ որի հայկական վեց գավառների վճարված տուրքը՝ տասնորդը կազմել էր 992,583 թուրքական ոսկի: Ըստ հաշվարկի յուրաքանչյուր հայ ընտանիքի մեկամյա հունձքի արժեքը կազմել է 1488 դահեկան կամ 338 ֆրանկ)		
5. Արջառ. Յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվարկվել է		
ա. Վարող արջառ – 1,5 զույգ (1 զույգ եզը 10 թուրքական ոսկի (230 ֆրանկ) արժեքով)	375	3000
բ. Տնային այլ կենդանիներ (կով, հորթ, ձի)	187,5	1500
գ. Ոչխար և այծ (ըստ հաշվարկների յուրաքանչյուր ընտանիք հարկ է վճարել 14 ոչխար և այծ պահելու համար, որը կազմել է 55 դահեկան): Մեկ ոչխարի կամ այծի գինը կազմել է 20 ֆրանկ	280	1680
6. Պարեն (հաշվարկվել է յուրաքանչյուր ընտանիքի 6 ամսվա սննդամթերքի և անասունների կերի արժեքը)	287,5	2875
7. Դրամագլուխ (ծախսվող դրամագլուխը)		300
Մեկ ընտանիքի կրած վնասները		17043
Գավառներում ապրող 270,000 ընտանիքների կրած վնասները		**4,601,610,000**

Բ. Քաղաքների բնակչության վնասները և վերականգնման համար նրանց կարիքները (մեկ ընտանիքի հաշվարկով)		
8. Կալվածքներ (բնակարաններ, մենատներ, վաճառատներ, հյուրանոցներ, գործարաններ,	1900	15200

արհեստանոցներ, խանութներ, ջրաղացներ, պարտեզներ, այգիներ և անտառներ)		
9. Կահ–կարասի (կահույք, հագուստեղեն և գոհարեղեն, գույք)	1800	9000
10. Պարեն (վեց ամսվա հաշվարկով)	575	5750
11. Դրամագլուխ (առևտրականների, արվեստագետների և արհեստավորների արժեթղթեր, ապրանքներ և հիմնադրամ)	-	6000
Մեկ ընտանիքի կրած վնասը		35950
Քաղաքային բնակչության 90000 ընտանիքների կրած վնասը		**3.235.500.000**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎՆԱՄՆԵՐ		
Գ. Մարդկային կորուստներ		
12. Հատուցումներ մեկ միլիոն ոչնչացված մարդկանց վերապրող ժառանգներին (իսկ նրանց բացակայության դեպքում՝ ազգին), յուրաքանչյուր մարդուն 5000 ֆրանկի չափով		5.000.000.000
13. Հատուցումներ 50000 հաշմանդամներին, վիրավորներին և անբուժելի հաշմանդամներին, յուրաքանչյուրին 5000 ֆրանկի չափով		250.000.000
14. Հատուցումներ 346350 աքսորվածների ժառանգորդներին, յուրաքանչյուրին 1000 ֆրանկի չափով		346.350.000
15. Հատուցումներ աքսորից վերապրողներին, արտասահմանում ապաստանածներին, որոնք զրկվել են աշխատանքից և սեփականության իրավունքից, 800000 մարդու կամ 160000 ընտանիքի հաշվարկով, յուրաքանչյուր ընտանիքին 4000		640.000.000

ֆրանկի չափով		
16. Հատուցումներ կաշառակերության և բռնագրավման և բռնագրավման հետևանքով կրած վնասների		200.000.000
17. Արտասահմանում ապաստան գտած գաղթականներին (հիվանդանոցների, որբանոցների և առողջապահական հաստատությունների պահպանության և մատակարարման համար)		200.000.000
18. Հատուցումներ ազգային և կրոնական հաստատությունների ամբողջական կամ մասնակի ավերումների համար, այդ թվում՝ 83 առաջնորդարաններ, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանքեր, 26 վարժարաններ և դպրեվանքեր, 1439 դպրոցներ, 42 որբանոցներ, իրենց գույքով, ինչպես նաև ձեռագիր մագաղաթներ և պատմագեղարվեստական հուշարձաններ և արժեքներ		75.000.000
19. Զրանցքներ, աղբյուրներ, ջրհորներ և այլ կառույցներ		50.000.000
Ընդամենը		6.761.350.000

Ընդամենը գավառների բնակչության կրած վնասները՝ 4.601.610.000

Ընդամենը Քաղաքների բնակչության վնասներ՝ 3.235.500.000

Ընդամենը ընդհանուր վնասներ՝ 6.761.350.000

Ընդհանուր գումար՝ 14.598.460.000 ֆրանկ[13]

[13] Ս. Վրացյանի նշված աշխատությունում արևմտահայերին նախատեսվող գումարը կազմում է 14 մլրդ 598 մլն 510 հազ. ֆրանկ: Նույն է նաև Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի Փարիզի կոնֆերանսում

Այսպիսով, խաղաղության վեհաժողովին Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի կողմից ներկայացված հայերի նյութական պահանջների վերաբերյալ հուշագրում հայ ժողովրդին թուրքերի հասցրած վնասները կազմում են 19 մլրդ 130 մլն 932 հազ. ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող գների և ֆրանկի փոխարժեքին համապատասխան), որից Արևմտյան Հայաստանին բաժին է ընկնում 14 մլրդ 598 մլն 460 հազ., իսկ Հայաստանի Հանրապետությանը և Կովկասի հայաբնակ շրջաններին՝ 4 մլրդ 532 մլն 472 հազ. ֆրանկ:

Անդրադառնալով փետրվարի 12-ի հուշագրին՝ Հ. Քաջազնունին նշել է. «Որտեղի՞ց ծնունդ առավ աշխարհակալական այս ապշեցուցիչ պահանջը»:Հայաստանի Հանրապետության պատվիրակության և Պողոս Նուբար փաշայի պատվիրակության միջև տարաձայնությունները գնալով խորանում էին,իսկ հայերի ձայնը Փարիզի վեհաժողովում ավելի լսելու դարձնելու համար անհրաժեշտ էր հանդես գալ միասնաբար:Անշուշտ, հայկական դիվանագիտությունը Փարիզի խորհրդաժողովում կարող էր շոշափելի արդյունքների հասնել միայն այն դեպքում,եթե գործեր միասնաբարև ունենար ռազմավարական ու մտավորական ճիշտ դիրքորոշում:

1919թվականի փետրվարի 25-ին Տասի խորհուրդը վերջապես լսեց հայկական երկու պատվիրակությունների նախագահներին և ընդունեց հայկական պահանջների հուշագիրը՝Միացյալ Հայաստանի քարտեզով:

արված զեկույցում՝ Tableau approximatif des Reparations et indemnités Pour les Dommages subis par la Nation Armenienne en Armenie de Turquie et Dans la Republique Arnenienne Du caucase, Paris, 1919. Սակայն պետք է հաշվի առնել, որ այդ հաշվարկները մոտավոր են:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՄԱՆԴԱՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Անտանտի տերությունների արևելյան քաղաքականության հիմնադրույթները զարգացում գտան Կ.Պոլսից և Փոքր Ասիայից մինչև Հայաստան և Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագծում: Դրանք ձևակերպվեցին ամերիկյան երկու կարևոր փաստաթղթերում՝ԱՄՆ լիազորներ Չարլզ Քրեյնի և Հենրի Քինգի 1919թվականի օգոստոսի 28-ին Փարիզի խորհրդաժողովին և Վ.Վիլսոնին,իսկ մյուսը՝ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության 1919թ. հոկտեմբերի 16-ին պետդեպարտամենտին,այնուհետև Սենատին ներկայացրած զեկուցագրերն են:

Չ.Քրեյնի և Հ.Քինգի,այնուհետև Ջ.Հարբորդի առաքելությունների նպատակը Կ.Պոլսի, սևծովյան նեղուցներին Հայաստանի մանդատի հարցերն ուսումնասիրելն ու դրանց հնոր լուծումներն առաջարկելն էր: Հարցը շատ էր հետաքրքրում հաղթող տերություն ներին, որովհետև նրանցից յուրաքանչյուրն փլուզվող կայսրությունում ուներ պատ մական, քաղաքական,կրոնական, ֆինանսական,տարածքային և այլ շահեր;Իսկ դրանք անընդհատ բախվում էին իրար՝առաջացնելով միջպետական լարված իրադրություն:Ռուսաստանի խորհրդայնացումից հետո Անգլիան,Ֆրանսիանև Իտալիան անթույլատրելի էին համարում նեղուցները հանձնել Խորհրդային Ռուսաստանին: Նրանք ավելի ընդունելի էին համարում Լ.Ջորջի առաջարկը,որով նախատեսվում էր միջազգայնացնել նեղուցները,իսկ Արևմտյան Հայաստանի և նեղուցներրի մանդատը տալ մեկ պետության,քանի որ 1878թ.Բեռլինի վեհաժողովում սահմանված սկզբունքը իրեն չէր արդարացրել:

Դաշնակիցների ընտրությունը կանգ առավ ԱՄՆ-ի վրա,որովհետև առաջինը՝ ԱՄՆ-ը տարածքային և ռազմավարական շահագրգռվածություն չուներ և անշահախնդիր վերահսկողություն կարող էր հաստատել նեղուցների վրա,երկրորդը՝մեծ տերությունները անհրաժեշտ էին համարում Արևելքի երկրներում տարածել ամերիկյան ժողովրդավարության օրինակելի սկզբունքներն ու չափանիշները: Նախատեսվող մանդատի տակ վերցվելիք տարածքների ուսումնասիրության համար 1919թ. հունիսի 10-ին Թուրքիա մեկնեցին ԱՄՆ ներկայացուցիչնեչ Չ.Քրեյնը և Հ Քինգը՝ որպես Փարիզի վեհաժողովի լիազորներ: Նրանց եզրակացությունները Փարիզի վեհաժողովին և Վ.Վիլսոնին ներկայացվեց

օգոստոսի 28-ին: Այդ եզրակացության մեջ ամերիկյան գործիչները բնական էին համարում ամբողջ Հայաստանի անջատումը թուքական կայսրությունից; Բայց հաշվի առնելով այն հանգամանքը,որ 1894-1896թ.թ.,1908-1919թ.թ., 1915-1916թ. ,,սարսափելի կոտորածներից,, հետո այդ տարածքներում հայերը փոքրամասնություն են կազմում,անհնարին էր համարվում ծովից-ծով անկախ Հայաստանի ստեղծումը: Դա կլիներ հայերի փոքրամասնության իշխանությունը մեծամասնություն կազմող մահմեդական բնակչության հանդեպ,կառաջացներ լուրջ դիմակայություն և հայերին կդներ անապահով կացության մեջ:Դրա փոխարեն Չ.Քրեյնը և Հ.Քինգը առաջարկում էին հայկական պետություն ստեղծել մի այնպիսի տարածքում,որտեղ երաշխավորված կլիներ հայերի ազատությունը թուրքերի գերիշխանությունից:Որպես այդպիսի տարածք դիտարկվում էր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսների կողմից գրաված Արևմտյան Հայաստանի տարածքը՝ելքով դեպի Սև ծով:Այդ տարածքում պետք է կենտրոնացվեին հայերը,իսկ մահմեդական բնակչությունն այդտեղից աստիճանաբար դուրս էր բերվելու:Դրա դեմ թուրքերը և քրդերը բողոքել չէին կարող,որովհետև այդ տարածքը ավելի մեծ չէր լինելու պատմական Հայաստանի տարածքից:Ընդ որում մանդատատեր պետության վերահսկողությունը շարունակվելու էր այնքան ժամանակ,մինչև հայերը բացարձակ մեծամասնություն կազմեին Հայաստանում և պատրաստ լինեին ինքնակառավարվելու: Սակայն այս պատվիրակության գործունեությունը ԱՄՆ նախագահի բոլոր հարցերի պատասխանը չտրվեց:

Հայաստանի մանդատի պայմանները քննելու նպատակով 1919 թ. ամռանը Առաջավոր Ասիա ուղարկվեց նոր հանձնախումբ՝ գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ: Լինելով Կ. Պոլսում, Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանում՝ Հարբորդը 1919 թ. սեպտեմբերի 25-ին ժամանեց Երևան: Պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնաշխարհագրական, մշակութային ու ռազմագիտական հարուստ նյութերի հիման վրա նա կազմեց տեղեկագիր: Ելնելով հաղորդակցության ճանապարհների բարդությունից և տնտեսական պայմաններից՝ Հարբորդը Հայաստանի մանդատի ստանձնումը իրականանալի էր համարում միայն ամբողջ Փոքր Ասիան և Անդրկովկասը մեկ մանդատատերի հանձնելու դեպքում: Մանդատն ընդունելով՝ առաջիկա հինգ տարվա ծախսերը պետք է կազմեին 757 մլն դոլար:

Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար նախապես անհրաժեշտ էր համարվում 59 հազարանոց բանակի առկայությունը: Իր տեղեկագրում Հայաստանի մանդատն ընդունելու օգտին Հարբորդը բերում էր 14 փաստարկ, դեմ՝ 13: Ուշագրավ է, որ իր ճանապարհին՝ Սերասաիայում, Հարբորդը հանդիպել էր թուրքական «Միլլի» շարժման առաջնորդ Մուստաֆա Քեմալին և ժամանելով Երևան՝ Հայաստանի ղեկավարությանն էր փոխանցել անմիջապես թուրքերի հետ բանակցելու Քեմալի առաջարկը:

ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՐՑԸ

Եռյակ դաշինքի երկրներից Թուրքիայի հետ հաշտություն կնքելու համար 1920թ ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում հրավիրված կոնֆերանսում մեծ տերությունների ղեկավարները հատուկ ուշադրություն հատկացրեցին հայկական հարցին,ընդգծելով,որ նրա լուծումը նշանակում է Հայաստանի երկու մասերի միավորումը: Հայաստանի վերաբերյալ հարցերը քննարկելիս թույլատրվել էր նաև Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի մասնակցությունը[14]:

Այս խնդիրը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ էր հայոց մանդատը տալ որևէ մեծ տերության:Ընտրությունը կանգ առավ ԱՄՆ-ի վրա:1920թ մայիսի 17-ին ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնը Փարիզում ԱՄՆ-ի դեեսպանի միջոցով Անտանտի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը:Երբ 1920թ. Մայիսի 24-ին Վ.Վիլսոնը ԱՄՆ-ի Կոնգրեսին դիմում է ուղերձով՝Հայաստանի մանդատն ընդունելու առաջարկով՝Կոնգրեսի մեծ մասը մերժում է:Նրանք չէին ցանկանում ընդունել աղքատ ու ավերակված Հայաստանի հովանավորությունը:

Հայաստանի մանդատի մերժումը ուներ իր քաղաքական և տնտեսական դրդապատճառները: «Վիսոնի 14» կետերը նախատեսում էին հետպատերազմյան աշխարհակարգում ԱՄՆ-ի գերիշխող դիրքի հաստատումը,սակայն ԱՄՆ-ը չկարողանալով հասնել իր նպատակին 1920թ-ից սկսել էր ինքնամեկուսանալ:

Չնայած մանդատջայյին տարածքների բաժանման ժամանակ, ի տարբերություն Անգլիայի և Ֆրանսիայի,ԱՄՆ-ին ոչինչ չհասավ,սակայն մանդատային համակարգը վերջինիս համար ապահովեց «Բաց դռների» քաղաքականությունը,այսինքն՝ կապիտալի ազատ մուտքը ենթամանդատային շրջաններ:

Սան Ռեմոյի կոնֆերանսը Թուրքիայի հետ ապագա հաշտության՝Սևրի պայմանագրի հիմք հանդիսացավ,սակայն մանդատի բացակայության պայմաններում այն Թուրքերի կողմից օր առաջ Հայաստանը ռազմական ուժով

[14] Սան Ռեմոյի կոնֆերանսում Հայաստանին և հայկական հարցին առնչվող խնդիրների մասին տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/,էջ 612-672

ջախջախելու պատճառ դարձավ՝դրանով,փաստորեն, հայ-թուրքական պատերազմը դարձավ անխուսափելի:

https://www.google.com

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտին վերաբերվող վերսալյան համակարգի վերջին պայմանագիրն էր:Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները,որոնք քննարկվեցին Փարիզից ոչ հեռու Սևր արվարձանում՝ 1920թ. Օգոստոսի 10-ին:Պայմանագիրը կնքվեց Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիներ Մեծ Բրիտանիայի,Ֆրանսիայի,Իտալիայի,Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի,Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության, Հեջազի միջև:Հայաստանի Հանրապետուրյան կողմից պայմանագիրը ստորագրել է Ավետիս Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը դե յուրե /ըստ օրենքի/ ճանչվում էր պայմանագիր ստորագրած մյուս երկրների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված:Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի ¾ մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ազգեր:Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք,Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային:Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային

Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից, ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ:Իտալիային էր անցնում Դոդենկանեզի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլիի թերակղզին և Իզմիրը:Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային հանձնաժողովի հսկողության տակ:

Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը՝ 88-93-րդ հոդվածները ամբողջությամբ վերաբերվում էին Հայաստանին:Մասամբ կամ անուղղակիորեն Հայաստանին կամ հայերին էին վերաբերվում նաև 125, 142, 144, 226, 230, 277, 349, 351, 352 հոդվածները[15] այն ծառայեցնել մեր հայրենիքի պաշտպանմանը:

[15] Ամբողջությամբ տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/,էջ 676-682:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փարիզի վեհաժողովի որոշումները,Սևրի պայմանագիրը և նրանից ածանցվող Վիլսոնի իրավարար վճիռը հայ ժողովրդի մեջ ազատագրվելու և Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու իրական հույսեր արթնացրեց: Սակայն իրավարար վճիռը ուշացած էր, իսկ մեծ տերությունների համար կարգախոս էր դարձել Անգլիայի նախկին վարչապետ լորդ Հենրի Կալմերսթոնի խոսքերը «Անգլիան չունի հավերժական բարեկամներ և չունի հավերժական թշնամիներ, այլ ունի միայն հավերժական շահեր» :

Հայկական հարցի լուծման համար կարևոր է հաշվի առնել աշխարհի հզոր տերությունների աշխարհաքաղաքական շահերը, նրանց նպատակները ինչպես Կովկասում այնպես էլ Թուրքիայում և Մերձավոր Արևելքում, որտեղ նկատվում է տարածաշրջանային քարտեզի վերաձևման գործընթաց:

Հայ ժողովուրդը պետք է զգոն լինի պատմական հիշողությունները և պատմության դասերը մեզ պարտադրում են , որ մեր հայրենիքի պաշտպանության և անվտանգության հույսը պետք է կապենք սեփական ուժերի հետ: Հայ ժողովուրդը առաջադեմ հասարակությունից ակնկալում է պատմական արդարության, իր ազգային խորը վերքերը տեսնելու մեջ: Անկախ այդ ամենից հայ ժողովուրդը շարունակելու է իր արդար, դժվարին պայքարը հայկական հարցի արդարացի լուծման համար:

Թեմայի ուսումնասիրությունը այս ժամանակաշրջանում խիստ արդիական է և շատ կարևոր, որովհետև առկա աշխարհաքաղաքական իրավիճակում աշակերտը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել, հասկանալ ազգային գերակա շահը և փորձի այն ծառայեցնել մեր հայրենիքի անկախության և ինքնիշխանության պահպանմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աճէմեան Լ.**, Եգիպտահայ տարեցոյց 1925,Աղեքսանդրիա, 1924թ.:

2. **Արզումանյան Մ.,** Արհավիրքից վերածնունդ , Ե., 1973թ.:

3. **Գալոյան Գ.,** Հայաստանը և մեծ տերությունները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» 1999թ.:

4. **Զաքարյան Ա.**, Ե., ՀՀ ԳԱԱ, 2005թ., Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, (քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածու),:

5. **Կարապետյան Մ.,** Հայաստանը 1912-1920 թվականներին, Ե., «Զանգակ-97», 2003թ.:

6. Հայոց պատմություն ՀՀ ԳԱԱ 2010թ.հ.4-րդ, գիրք 1-ին:

7. **Քաջազնունի Հ.,** Հ. Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Վիեննա, 1923թ.: «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» Ե., 2002թ.:

8. **Никольсон Г.** Как делался мир в 1919 г. М.: Госполитиздат, 1945, с. 57; **Тардье,** Мир, М.: Госполитиздат 1943: